ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ – Ծ1032.Մ11002/22

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ և ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 31 » Հունվարի 2022 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության սոցիալական աշխատող տնօրենի պարտականությունները կատարող՝ Ս. Արզումանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11002 «Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից՝ 38,535,700 (երեսունութ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց՝ նրանց անհատական սոցիալական կարիքներին համապատասխան տնային պայմաններում կենցաղային, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական օգնություն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4.Նախարարությանը ներկայացնել կազմակերպությունում հաշվետու ժամանակաշրջանում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի.

2.4.6. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.7 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացնում Միջոցառումների իրականացման վերաբերյալ եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երեքական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 5 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում խնամվողների թվաքանակի շարժի և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 և 4 հավելվածների:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը, իսկ որոշ ծախսային հոդվածների գծով դեկտեմբեր ամսվա արդյունքներով պայմանավորված խնայողությունների ետ վերադարձը իրականացնել մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը:

5. Պայմանագրի գինը

5.1 Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է 38,535,700 (երեսունութ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.1.1 Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.3. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է հաստատուն ծախսեր.

5.3.1. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 38,535,700 (երեսունութ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 5 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N N 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածները բաղկացած են 12 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ք. Երևան, Կառավարական տուն-3	ք.Երևան, Անդրանիկի 74
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011016772 ՀՎՀՀ 01506515	« ՀՀ ՖՆ գործառնական վարչություն » Հ/Հ 900018002155 ՀՎՀՀ 01537679
Նախարարության գլխավոր Քարտուղար՝ **Ս.Մուրադյան** (ստորագրություն) Կ. Տ.	Կազմակերպության սոցիալական աշխատող, տնօրենի պ/կ՝ **Ս.Արզումանյան** (ստորագրություն) Կ. Տ.

N 1 Հավելված

2022թ. «31» հունվարի կնքված

N ԴՏՊ – Ծ1032.Մ11002/22 պայմանագրի

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) գործառույթները բաղկացած են երկու բաղադրիչից՝

1. Տնային պայմաններում սոցիալական սպասարկում, որտեղ խնամքի ծառայություններ ստանալու իրավունք ունեն վաթսունհինգ տարին լրացած (այսուհետ՝ տարեց) միայնակ չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) կենսաթոշակառուները, կամ տասնութ տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձինք (այսուհետ՝ շահառու):
2. Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանը («Վետերան» օթևան), որը նախատեսված է աշխատանքի վետերանի կարգավիճակ կամ 40 և ավելի տարվա աշխատանքային ստաժ ունեցող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամողներ չունեցող տարեց անձանց, ինչպես նաև «հաշմանդամ-երեխա» կարգավիճակ ունեցող երեխայով միածնող ընտանիքի կամ ամուսնական զույգի, եթե ամուսիններից երկուսն էլ ունեն հաշմանդամություն բնակության համար:

Կազմակերպությունն իրականացնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքում բնակվող 180 շահառուի և «Վետերան» օթևանում բնակվող շահառուների (տնային պայմաններում սպասարկման կարիք ունեցող) տնային պայմաններում խնամք և սպասարկում՝ 24 հաստիքային միավորի միջոցով:

h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և գնահատման չափանիշները	վերջնա ժամկետը	Պահանջվող գումարը
1.	Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	Իրականացնում է 1. խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված	**Կազմակերպությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.** **1. Տնային պայմաններում**	**Տնային պայմաններում** 1)Խնամքի ծառայությունների տրամադրման կազմակերպումն իրականացվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի, ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի և ՀՀ աշխատանքի և	31.12.2022թ.	Սույն պայմանագրով նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների շրջանակներում

		անձանց՝ նրանց անհատական սոցիալական կարիքներին համապատասխան տնային պայմաններում կենցաղային, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական օգնություն: 2. հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով և որոշակի սոցիալական ծառայություն ներով ապահովումը	1) կենցաղային սպասարկում և խնամքի ծառայությունների տրամադրում, 2) բժշկական օգնություն և սպասարկում, 3) սոցիալ-հոգեբանական օգնություն, 4) ուղեկցման ծառայություններ, 5) խորհրդատվական օգնություն: **«Վետերան» օթևանում** 1) կենցաղային սպասարկում՝ ըստ անձի գնահատված կարիքի 2)առաջին անհրաժեշտության իրերով (կահույք, անկողնային սպիտակեղեն) ապահովում՝ ընդունվող անձի և կազմակեպության միջև կնքված պայմանագրով նախատեսված	սոցիալական հարցերի նախարարի 2014թ. փետրվարի 6-ի N 23-Ա/1 հրամանի պահանջներին համապատասխան 2)խնամվողների ուղեգրումը, ընդունելությունը, հաշվառումը, խնամքի ծառայությունների տրամադրումը և դուրսգրումը իրականացվում է ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թ. հունիսի 6-ի N 83-Ա/1 հրամանի պահանջներին համապատասխան՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում 3) կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը կազմվում է ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 29-ի «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու մասին» N 1292-Ն որոշման N 3 հավելվածի պահանջներին համապատասխան՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում 4) սոցիալ-հոգեբանական ծառայության տրամադրում (համապատասխան մասնագետների կողմից տունայցերի կազմակերպում շահառուներին) տարեկան յուրաքանչյուր սպասարկվողին առնվազն 8 անգամ կամ եռամսյակը 2		

			դեպքերում և կարգով. 2) սոցիալ-հոգեբանական օգնություն. 3) խորհրդատվա կան օգնություն. 4) ըստ անհրաժեշտության այլ սոցիալական ծառայություններ:	անգամ, կատարելով համապատասխան հաշվառում՝ ըստ առանձին ծառայությունների (սոցիալական խորհրդատվություն, հոգեբանական օգնություն), նշելով ծառայություն ստացած անձանց անուն, ազգանունը և ծառայությունից օգտվելու ամսաթիվը. 5) բոլոր սպասարկվողների կարիքների գնահատում առնվազն եռամսյակը մեկ անգամ, կատարելով համապատասխան գրառում սպասարկվողների անհատական ծրագրերում. 6) ըստ բժշկի նշանակման՝ առկա տեսականու շրջանակներում դեղերով ապահովվում են այն սպասարկվողները, որոնք ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում, կատարելով համապատասխան հաշվառում սպասարկվողների բժշկական քարտերում 2. **«Վետերան» օթևանում** 1)Խնամքի ծառայությունների տրամադրման կազմակերպումն իրականացվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի, 6-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N5 հավելվածի պահանջներին համապատասխան. 2)խնամվողների ուղեգրումը, ընդունելությունը, հաշվառումը, խնամքի ծառայությունների տրամադրումը և		

				դուրսգրումը իրականացվում է ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման N5 հավելվածի պահանջներին համապատասխան՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում. 3)կենցաղային սպասարկում՝ կազմակերպության և «Վետերան» օթևան ընդունվող անձի միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև ըստ անձի գնահատված կարիքի՝ առաջին անհրաժեշտության իրերով (կահույք, անկողնային սպիտակեղեն) ապահովում. 4) սոցիալ-հոգեբանական ծառայության տրամադրում «Վետերան» օթևանում բնակվող այն անձանց, ովքեր ընդգրկված են նաև տնային սպասարկման ցուցակներում՝ տարեկան յուրաքանչյուր սպասարկվողին առնվազն 8 անգամ կամ եռամսյակը 2 անգամ. 5) բոլոր շահառուների կարիքների գնահատում առնվազն եռամսյակը մեկ անգամ, 6) խորհրդատվական օգնության տրամադրում կազմակերպության մասնագետների կողմից յուրաքանչյուր շահառուին տարեկան առնվազն 2 անգամ. 7) Առկա տեսականու շրջանակներում դեղերով ապահովում՝ ըստ բժշկի նշանակման, այն անձանց, ովքեր ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված՝ անվճար կամ արտոնյալ		

				պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում. 8) ըստ անհրաժեշտության՝ այլ սոցիալական ծառայություններ՝ ընդունվող անձի և կազմակեպության միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով: Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում է «Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգի» շահագործումը, այդ թվում՝ խնամվողների տվյալների և մոնիթորինգային ցուցանիշների մուտքագրումը, խմբագրումը, հաշվետվությունների կազմումը և սահմանված՝ ամենամսյա, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացումը՝ համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թ. հունիսի 9-ի N 86/Ա-1 հրամանի:*		

*Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունիսի 22-ի N 69-Ա/1 հրամանի 2.10 կետին և նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության, ինչպես նաև նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա, որոնք հիմք են հանդիսանում Կազմակերպության տնօրենի աշխատանքը

գնահատելու, ինչպես նաև Կազմակերպության որակական ցուցանիշների կատարողական արդյունքների հետագա բարելավման համար:

Կազմակերպության տնօրենի աշխատանքը գնահատվում է բավարար, եթե վերը նշված արդյունքային բոլոր ցուցանիշները, ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության, կատարվել են նվազագույնը 75%-ով:

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության Սոցիալական աշխատող, տնօրենի պ/կ՝
Ս.Սուրադյան	**Ս.Արզումանյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. S.	Կ. S.

N2 Հավելված
2022թ.« 31 » հունվարի կնքված
N ԴՏՊ- Ծ1032.Մ11002/22 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11002 «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկում» միջոցառման շրջանակներում տնային պայմաններում խնամքի իրականացման նպատակով

ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1	Շահառուների միջին ամսական թվաքանակը	180 շահառու 24 հաստիքային միավոր
2	Հաստիքային միավորների թվաքանակը	45,720 մ/օր
3	Մարդ/օրերի տարեկան քանակը	38,535.70 հազ. դրամ
4	Հաստատուն ծախսեր	38,535.70 հազ. դրամ
5	Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը	

այդ թվում՝

Խնամքի իրականացման գծով

ա/ ըստ ամիսների մարդ/օր

Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)	Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)
հունվար	3,420	հուլիս	3,600
փետրվար	3,600	օգոստոս	4,140
մարտ	3,960	սեպտեմբեր	3,780
ապրիլ	3,780	հոկտեմբեր	3,780
մայիս	3,780	նոյեմբեր	3,960
հունիս	3,960	դեկտեմբեր	3,960
Ընդամենը			***45,720***

ա/ հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	3,211.3	հուլիս	22,479.1
փետրվար	6,422.6	օգոստոս	25,690.4
մարտ	9,633.9	սեպտեմբեր	28,901.8
ապրիլ	12,845.2	հոկտեմբեր	32,113.1
մայիս	16,056.5	նոյեմբեր	35,324.4
հունիս	19,267.8	դեկտեմբեր	38,535.7
Ընդամենը			***38,535.7***

բ/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	34,560.00
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	3,925.70
Այլ ծախսեր	480000	50.00
Ընդամենը		***38,535.70***

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Ս.Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

Սոցիալական աշխատող տնօրենի մ/կ

Ս. Արզումանյան

(ստորագրություն)

Ս.Տ

N3 Հավելված

« 31 » Հունվարի» 2022թ. Կնքված N
ԴՏՊ – Ծ1032.Մ11002/22 պայմանագրի

Հաշվետվություն

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11002 «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկում» միջոցառման շրջանակներում տնային պայմաններում խնամքի իրականացման նպատակով «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ------- ամսում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ

	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Գրանցվածների թիվը	Ընդունվել են	Դուրս են գրվել	այդ թվում			ժամանակավոր բացակայող խնամվողների թիվը	ժամանակավոր բացակայությունից վերադարձած խնամվողների թիվը	Խնամվողների թիվը հաշվետու ամսվա վերջում	այդ թվում		Դուրս գրված խնամվողների մարդ/օրերի թիվը	ժամանակավոր բացակայող խնամվողների բացառությամբ մարդ/օրերի թիվը	Նոր ընդունվածի և ժամանակավոր/բացակայության կց վերադարձած խնամվողների մարդ/օրերի թիվը	Խնամվողների փաստացի մարդ/օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանում խնամվողների միջին թիվը	Ղեկավարի մարդ/օրերի թիվը
						Վերադարձել են ընտանիք	Մահացել են	Տեղափոխվել են այլ հաստատություններ				Տղամարդ	Կին						
	1	2	3	5	6	7	8	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
1					0												0	#ДЕЛ/0!	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	#ДЕЛ/0!	0

ՊՈԱԿ-ի Սոցիալական աշխատող, տնօրենի պ/կ (ստորագրություն) Ս. Արզումանյան (անուն,ազգանուն)

Գլխավոր հաշվապահ (ստորագրություն) Ք. Մեյմարյան (անուն,ազգանուն)

Կ.Տ.

N 4 Հավելված

2022 թ." 31 " հունվարի կնքված

N ԴՏՊ – Ծ1032.Մ11002/22 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11002 «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկում» միջոցառման շրջանակներում տնային պայմաններում խնամքի իրականացման նպատակով «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին ------ամսում հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ

հազ.դրամ

Ծախսային հոդվածներ			Հաստատված նախահաշվի գումարը	Ճշտված նախահաշվի գումարը	Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման ծածկագիրը											
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը			Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	բարեգործական կազմակերպության անվանումը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		4111000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411110									
	Ժամանակավոր աշխատողներին վճարվող աշխատավարձ	411120									
	Դատարանի որոշումների հիման վրա վճարվող աշխատավարձ	411130									
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ		4112000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Պարգևատրումներ	411210									
	Դեղամիջոց	411220									
Էներգետիկ ծառայություններ		421200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգետիկ ծառայություններ	421210									
	Ջեռուցման ծառայություններ	421220									
Կոմունալ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310									
	Այլ կոմունալ ծառայություններ	421390									
Կապի ծառայություններ		421400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կապի աբոնենտային	421410									
	տեղական խոսակցությունների վճար										
	միջքաղաքային խոսակցության գումար										
	ինտերնետային կապ										
	Փոստային և սուրհանդակային վճարներ	421420									
Ապահովագրական ծախսեր		421500	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի ապահովագրություն	421510									

Գույքի և սարքավորումների վարձակալություն		421600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի վարձակալություն	421610									
	Սարքավորումների վարձակալություն	421620									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910									
Մասնագիտական ծառայություններ		424100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մասնագիտական ծառայություններ	424110									
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110									
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		425200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային պիտույքներ	426110									
	Հագուստ և համազգեստ	426120									
Տրանսպորտային նյութեր		426400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Վառելիքի ծախսեր	426410									
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490									
Առողջապահական և լաբորատոր նյութեր		426600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Բժշկական քննությունների նյութեր	426610									
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգենիկ նյութեր)	426710									
	Հանրային սննդի նյութեր (Ծխախոտ)	426720									
	Կենցաղային այլ նյութեր (Տնտեսական նյութեր ապրանքներ)	426730									
Պարտադիր վճարներ		482300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ պարտադիր վճարներ	482350									
Այլ ծախսեր		486100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ ծախսեր	486110									

Սոցիալական աշխատող, տնօրենի պ/կ՝ _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____
(ստորագրություն)

Կ.Տ

N 5 Հավելված
2022թ. 31 հունվարի կնքված
N ԴՏՊ – Ծ1032.Մ11002/22 պայմանագրի

Նախարարություն՝

"ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

հասցե՝ ք.Երևան, Կառավարական 3 տուն
ՀՀՖՆ Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

հ/հ 900011016772
հվհհ 01506515

Կազմակերպություն՝

Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն ՊՈԱԿ

հասցե՝ ք.Երևան Անդրանիկի 74
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

հ/հ 900018002155
հվհհ 01537679

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 2022թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝

Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 2022թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 2022թ–ից « »« » 2022թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	x	x	x	x	x	x
հաստատուն ծախս						
Ընդամենը	x	x	x	x		x

ընդունեց՝

/ստորագրություն/

Ս. Մուրադյան

Կ.Տ

հանձնեց՝

/ստորագրություն/

ՊՈԱԿ-ի Սոցիալական շխատող, տնօրենի պ/կ՝ Ս. Արզումանյան

N 6 Հավելված

2022 թ."31" 01 "կնքված

N ԴՏՊ – Ծ1032.Մ11002/22 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

« » 2022 թ

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը « » « » 2022թ

Պայմանագրի համարը՝

Պատվիրատուի անվանումը՝

Կատարողի անվանումը՝

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2022թ-ից « » « » 2022թ ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետեւյալ ծառայությունները

N	Մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
	Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	Կենցաղային սպասարկում, Բժշկական օգնություն և սպասարկում, Սոցիալ-հոգեբանական օգնություն Խորհրդատվական օգնություն				

Նշումներ անհամապատասխանությունների մասին

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ ____ _____ եզրակացություն
(Դրական/ բացասական)
պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

ստորագրությունը